




**ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**



**Ե Ր Ե Վ Ա Ն 2020**

## ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

### Բովանդակություն

Բովանդակություն .....	1
Ներածություն .....	1
1. Հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը.....	2
2. Շինհրապարակին ներկայացվող հիմնական պահանջներ.....	3
3. Ախտահանում .....	4
4. Ցանկապատում .....	4
5. Ուղղաձիգ հատակագծում.....	5
6. Հիմնական շենքերի և շինությունների օրինակելի ցանկ .....	5
7. Անցուղիներ .....	6
8. Մեկուսարան .....	7
9. Աղբահանություն.....	7
10. Ենթակառուցվածքներ.....	8
11. Ջրահեռացում .....	9
12. Հակահրդեհային և սանիտարահիգիենիկ սահմանափակումներ .....	9
13. Մակերևութային ջրահեռացում.....	10
14. Տարածքի պաշտպանություն քամիներից .....	11
15. Բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջների ապահովում.....	11
16. Կենդանիների նախասպանդային պահման բազային ներկայացվող պահանջներ..	11

### Ներածություն

Գյուղատնտեսական արդյունաբերական ձեռնարկության ծրագրի կարևոր բաղադրիչը, անկախ հզորությունից, գլխավոր հատակագիծն է:

Գլխավոր հատակագիծը այն հիմքն է, որի վրա որոշում է գյուղատնտեսական ձեռնարկության շինարարության, արտադրության գործառնության և շահագործման արդյունավետությունը, լիարժեք ճարտարապետական համլիրների ստեղծումը:

Գլխավոր հատակագիծը կառուցապատվող հողամասի վերաբերյալ նախագծային փաստաթուղթ է, որում նշվում են անհրաժեշտ տարածքի չափը, բոլոր հիմնական,

օժանդակ, նախագծված և վերակառուցված շենքերը և շինությունները, դրանց գտնվելու տեղադիրքը, շրջակա միջավայրի պահպանության օբյեկտները, ձեռնարկության տարածքի բարեկարգումը, ընդհանուր հատակագծային լուծումների տնտեսական արդյունավետությունը: Գլխավոր հատակագծում պետք է հաշվի առնել տարածքի բնական առանձնահատկությունները՝ ջերմաստիճանը և գերակշռող քամու ուղղությունը (քամիների վարդը):

Գլխավոր հատակագծի ձևավորման հիմնական սկզբունքներն են.

- ստեղծել պայմաններ տվյալ քանակի ապրանքների արտադրության համար նվազագույն աշխատուժի կիրառմամբ.
- տեխնոլոգիական, տրանսպորտային, տնտեսական, ինժեներական, հիգիենայի և անասնաբուժասանիտարական և գեղարվեստական և գեղագիտական պահանջների համապարփակ հաշվառում.
- հաշվի առնել կլիմայական, ինժեներական, երկրաբանական և տեղագրական պայմանները.
- գիտության և տեխնոլոգիաների առաջադեմ նվաճումների ներդրում, լուծումների առավելագույն արդյունավետություն՝ շինարարության ոլորտում նախկինում ձեռք բերվածի համեմատությամբ.
- համալիրի գոտիավորում:

Սպանդանոցների տարածքների գլխավոր հատակագծերին ներկայացվող պահանջները.

- Թափոններ հավաքելու համար պետք է տեղադրվեն ամուր կափարիչներով կոնտեյներներ:
- Բակում կենդանիների անասնաբուժական զննման համար պետք է սարքավորված լինի կենդանու կապելու հնարավորության հատուկ գոտի:
- Սպանդանոցի տարածքը պետք է ապահովված լինի խմելու ջրով:
- Տարածքի մուտքի և ելքի մոտ պետք է նախատեսվեն ախտահանման արգելապատնեշներ:
- Սպանդանոցն ու դրա շենքերը պետք է տեղակայված լինեն բնակելի շենքերից 300-500 մ հեռավորության վրա:
- Սպանդանոցը պետք է տեղակայված լինի բնակավայրի տարածքից դուրս:
- Սպանդանոցի շուրջ պետք է լինի հուսալի ցանկապատ, կանխելու այլ կենդանիների մուտքը տարածք:

### **1. Հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը.**

- ՀՀՇՆ II-8-04-01-97- Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն
- ՄՆԻՊ 2.04.02-84\* - Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և շինություններ

- ՄՆ 245-71-Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր
- ՄՆԻՊ 2.04.03-85 Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ,
- ՄՆԻՊ 2.10.03-84 Շենքեր և սենքեր անասնաբուծական, թռչնաբուծական, գազանաբուծական,
- ՄՆ 19.13330.2011 (փոխարենը ՄՆԻՊ II-97-76\*) Գլխավոր հատակագծեր գյուղատնտեսական ձեռնարկությունների,
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02.05-2003) Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար,
- ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն.
- ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշում,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի փետրվարի 13-ի N 27 որոշման 5-րդ բաժին:

## 2. Շինհրապարակին ներկայացվող հիմնական պահանջներ

Սպանդանոցների համար շինհրապարակը պետք է հատկացվի՝ հաշվի առնելով.

- Տեղանքի ռելիեֆը,
- ստորգետնյա ջրերի մակարդակը,
- մոտեցման ճանապարհների առկայությունը,
- ջրամատակարարման հնարավորությունը,
- կեղտաջրերի հեռացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- քամիների ուղղությունը և այլն:

Տարածքը պետք է տեղակայված լինի վնասակար նյութեր արտանետող արդյունաբերական ձեռնարկություններին դիմար կողմից՝ քամիների գերակշիռ ուղղությունների նկատմամբ, իսկ բնակելի շենքերի, բուժական և մշակութային հաստատությունների նկատմամբ՝ դրանցից հետո: Սանիտարական պաշտպանության գոտին պետք է համապատասխանի ՄՆ 245-71-ի պահանջներին:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների, շենքերի և շինությունների տեղակայումը չի թույլատրվում.

- կենցաղային թափոնի, կոյուղու մաքրման կայանների, անասնազերեզմանոց, կաշվե հումքի ձեռնարկությունների տեղում.
- հանքանյութերի տեղակայման վայրերում՝ առանց ընդերքօգտագործման մարմինների հետ համաձայնեցման.
- հանքերի թափոնադաշտերի վտանգավոր տարածքներում.
- սողանքների, սելավների հոսքի և ձնահյուսերի տարածքներում, որոնք կարող են սպառնալ շենքերի և շինությունների շահագործմանը.
- առողջարանների և հանգստավայրերի սանիտարական պահպանության բոլոր գոտիներում, ջրային և հանքային աղբյուրների սանիտարական պաշտպանության գոտիներում.

- քաղաքների կանաչ գոտիներում.
- օրգանական և ռադիոակտիվ թափոններով աղտոտված հողերում:
- բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում, ներառյալ մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանության գոտիներում:

### 3. Ախտահանում

Ձեռնարկության տարածքի մուտքի և ելքի դարպասների մոտ անիվները ախտահանելու համար պետք է տեղադրվեն հատուկ առուներ (ախտահանման արգելապատնեշներ)՝ ախտահանիչ լուծույթով անիվները ախտահանելու համար: Ճանապարհը պետք է լինի փոշի չառաջացնող նյութից:

Պահման գոտիներին (փարախ) կից պետք է առանձնացվեն կենդանիներ տեղափոխող բեռնատարների լվացման համար սրահ-հարթակ՝ անջրանցիկ պատերով և հատակով, առնվազն տասներկուս (12) մետր երկարությամբ, և չորս (4) մետր լայնությամբ: Սահմանազատող պատի նվազագույն բարձրությունը պետք է լինի երեք (3) մետր: հոսքաջրերը պետք է հեռացվեն դեպի սպանդանոցի կոյուղատար:

### 4. Ցանկապատում

Տարածքը պետք է ցանկապատված լինի 1.6-2.0 մ բարձրությամբ մետաղական ցանցով՝ հողի մակարդակից 0.5 մ բարձրությամբ երկաթե ստնե ցոկոլային հիմքով և բաժանված լինի երեք հիմնական գոտիների.

1. Տնտեսական՝ վառելիքի, շինարարական և օժանդակ նյութերի պահեստավորման համար օժանդակ շինությունների և օբյեկտների:

2. Սպանդանոցում պետք է ապահովել պայմաններ՝ կենդանիների նախասպանդային պահման, նախասպանդային անասնաբուժական զննման, մեկուսացված պահման և սանիտարական սպանդի համար(ըստ անհրաժեշտության):

3. Արտադրական, որտեղ գտնվում են հիմնական արտադրական շենքերը:

Պահման գոտիների (փարախ) ցանկապատը պետք է իրականացված լինի մետաղական խողովակներից, երկաթյա ձողերից կամ համապատասխան գերատեսչության կողմից հավանության արժանացած այլ նյութերից: Կենդանիների պահման գոտու (փարախ) ցանկապատի բարձրությունը պետք է ընդունել.

- Խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ առնվազն 1,5 մ,
- մանր եղջերավոր կենդանիների և խոզերի համար՝ ոչ պակաս, քան 1.0 մ,
- հատակից մինչև ցանկապատը՝ 0.2 մ,
- ցանկապատի վանդակավոր տարրերի միջտարածությունը՝ 0,2 մ-ից ոչ ավելի:

## 5. Լուսավորություն

Սպանդանոցի տարածքը պարագծի երկայնքով պետք է ունենա արհեստական լուսավորություն: Լուսավորության մակարդակը պետք է լինի մեկուկես (1,5) մինչև երեք ու կես (3.5) լյուքս:

## 6. Ուղղաձիգ հատակագծում

Տարածքի ուղղաձիգ համահարթեցումը պետք է ապահովի մթնոլորտային տեղումների, հալոցքաջրերի և հարթակների լվացման ջրերի հեռացումը տարածքից:

Ընդ որում, նախասպանդի պահպանման կենդանիների բազայից (ներառյալ կարանտին, մեկուսարան և սպանդանոց) հոսքաջրերը և վառելիքի արտահոսքերը չպետք է հասնեն ձեռնարկության մնացած տարածքներին:

Շինությունների տեղակայումը տարածքում պետք է բացառի տեղափոխման ուղիների հատումը.

- ա) հումքի և պատրաստի արտադրանքի,
- բ) առողջ և հիվանդ, ինչպես նաև հիվանդության մեջ կասկածվող կենդանիների,
- գ) սննդային արտադրանքի և կենդանիների, կենսաբանական և արադրական թափոնների:

## 7. Հիմնական շենքերի և շինությունների հանձնարարելի ցանկ

1. Պահակակետ,
2. Կենդանիների նախասպանդային պահման մասնաբաժին,
  - Կերերի պահեստ,
  - Կենդանիների պահման գոտի (փարախ՝ բաց և փակ),
  - Ավտոմեքենաների հարթակ,
  - Կշեռքի հարթակ,
  - Ախտահանման միջոցների պահպանում և պատրաստում,
  - Մաքրման սարքավորումների պահեստարան,
3. Պահեստներ,
4. Կարանտին, մեկուսարան,
5. Ախտահարված հոսքաջրերի ջրեմային ախտահանման շինություն,
6. Կաթսայատուն<sup>1</sup>,
7. Պոմպակայան<sup>2</sup>,
8. Մաքրման կառույցներ,
9. Մեքենաների լվացման և ախտահանման կետ,
10. Ախտահանման արգելապատնեշ:

<sup>1</sup> Անհրաժեշտության դեպքում

<sup>2</sup> Անհրաժեշտության դեպքում

**8. Բեռնման բեռնաթափման հարթակ**

Բոլոր սպանդանցները, որոնք մեքենայով տեղափոխմամբ ընդունում են կենդանիներ, պետք է ունենան բեռնման և բեռնաթափման հարթակ: Դա կարող է լինել ստացիոնար կամ շարժական: Հարթակը պետք է լինի պատրաստված լինի հեշտ մաքրվող և ախտահանվող, անջրանցիկ և ոչ սայթաքող նյութերից և զերծ ելուստներից, որոնք կարող են վնասել կենդանիներին: Հարթակի առավելագույն թեքությունը պետք է լինի քսանհինգ (25) %:

Վանդակապատերը, առաստաղները, դարպասները և կցակառույցները պետք է ապահովեն կենդանիների հեշտ և անվտանգ անցում:

**9. Փարախներ, անցուղիներ**

Պահման գոտիների (փարախ) մակերեսը հաշվարկվում է առնվազն երկուուկես (2.50) քառակուսի մետր մեկ ցուլի համար և առնվազն մեկ և երկու տասներորդ (1,2) քառակուսի մետր մեկ գլուխ ոչխարի կամ խոզերի համար:

Պահման գոտիների (փարախ) միջև պետք է ապահովված լինեն մեկուսացված անցուղիներ: Փարախները և կից անասնատարերը պետք է ունենան անջրանցիկ հատակ: Հատակը պետք է լինի չսայթաքող և ունենա առնվազն երկու (2) տոկոս թեքություն՝ դեպի կոյուղատար կամ այլ համապատասխան արտահոսք, չպետք է ունենա անցքեր, վնասվածքներ, հորեր, որոնք կարող են առաջացնել հեղուկի կուտակում և կանգ:

Ծածկած պահման գոտիները (փարախ) և անասնատարերը պետք է ունենան ծածկեր, որոնք անհրաժեշտության դեպքում հնարավոր է ամբողջությամբ հեռացնել: Դրանց իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել ջերմամեկուսացնող և հրակայուն նյութեր: Առաստաղների բարձրությունը չպետք է լինի երեք (3) մետրից պակաս:

Պահման գոտիների (փարախ) մուտքի մոտ և մուտքի հետ կապված՝ պետք է նախատեսել կենդանիների ստուգման փարախ՝ առնվազն քսան (20) քմ օգտակար մակերեսով:

Աշխատակազմի համար անցուղիների լայնությունը պետք է լինի առնվազն 1 մ, կենդանիների համար անցման լայնությունը պետք է լինի առնվազն.

- Խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 800 մմ
- Խոզերի համար՝ 600 մմ

Պահման գոտիների (փարախ) մակերեսը՝ մեկ գլխի համար պետք է ընդունել աղյուսակի տվյալներին համապատասխան.

NN	Կենդանիների տեսակը	Մեկ գլխի համար պահանջվող	Ջրելու ճակատ 1 գլխի համար մ
----	--------------------	--------------------------	-----------------------------

		մակերես մ <sup>2</sup>	
1	2	3	4
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ	2.5	0.6
2	Մանր եղջերավոր կենդանիներ	0.5	0.3
3	Խոզեր	0.8	0.3

Կենդանիներին պետք է լվանալ սպանդանոց մուտք գործելուց առաջ: Լվացումն իրականացվում է ցողման համակարգի միջոցով հիմնական պահման գոտուն կից կենդանիների պահման գոտում, որը պետք է ունենա քարից, բետոնից կամ համապատասխան գերատեսչության կողմից հավանության արժանացած նյութից պատեր: Հատակը պետք է լինի չսահող և անջրանցիկ: Շինության պատերի նվազագույն բարձրությունը պետք է լինի մեկ մետր ութսուն (1.8) սանտիմետր: Մանր եղջերավոր կենդանիների համար պատի նվազագույն բարձրությունը պետք է լինի մեկ մետր երեսուն սանտիմետր: Պահման գոտու լուսավորությունը պետք է կազմի 150 միավոր լյուքս:

Խոշոր եղջերավոր կենդանիների համատարած և խոզերի համար ընտրովի ընդհանուր ջերմաչափում անցկացնելու համար, նախքան սպանդի տանելը, անհրաժեշտ է նախատեսել կենդանիների համար 0,8 մ լայնությամբ անցուղի և անասնաբույժի համար 0,6 մ բարձրության վրա հարթակ՝ անասնաբուժական ջերմաչափման համար:

### 10. Մեկուսարան

Մեկուսարանի մակերեսը՝ կարանտինում գտնվող մեկ գլուխ կենդանու համար պետք է ընդունել աղյուսակի տվյալներին համապատասխան.

NN	Կենդանիների տեսակը	Մեկ գլխի համար պահանջվող մակերես մ <sup>2</sup>
1	2	3
1	Խոշոր եղջերավոր Կենդանիներ	2.8
2	Մանր եղջերավոր կենդանիներ	0.7
3	Խոզեր	1.0

### 11. Գոմաղբակուտակիչներ

Պահման գոտիները (փարախ) պետք է ունենան համապատասխան կցակառույց՝ պահման գոտու (փարախ) գոմաղբը և բեռնատարները մաքրելու արդյունքում կուտակված թափոնները պահելու համար: Կցակառույցը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջներին.



- պատերը պետք է պատրաստված լինեն քարից՝ անջրանցիկ ծածկույթով,
- անջրանցիկ հատակ՝ ջրահեռացմամբ,
- միջատներին ցրող նյութից ծածկ,
- դուռը պետք է կանխի հեղուկի արտահոսքը:

Թափոնները կցակառույցում չպետք է մնան քառասուն ութ (48) ժամից ավելի:

## 12. Թափոնների հեռացում

Արդյունաբերական և օժանդակ կառույցներից ոչ պակաս, քան 25 մ հեռավորության վրա, ասֆալտապատ հարթակների վրա աղբահավաք տարաների հիմքի 3-ապատիկ մակերեսի վրա տեղակայվում են մետաղական աղբակուտակիչներ կամ կափարիչով տարաներ: Դրանք պետք է դատարկվեն 2/3-ից ոչ ավելի լցվելու դեպքում, որից հետո դրանք պետք է լվացվեն և ախտահանվեն քլորակրով կամ կրակաթի 10% լուծույթով:

## 13. Ենթակառուցվածքներ

- Ջրամատակարարում

Ձեռնարկությունների ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում ջրամատակարարման ցանցերից և տեղական աղբյուրներից (արտեզյան հորեր): Բացառիկ դեպքերում, տարածքային սանիտարահամաճարակային կայանի համաձայնությամբ, սպանդի հեռավոր կետերի համար թույլատրվում է բաց ջրամբարներից ջրի օգտագործումը: Հորատանցքերի ջուրը կարող է օգտագործվել ձեռնարկություններին ջրամատակարարման համար, եթե ջրհորները և ջուրը բավարարեն խմելու ջրի համար օգտագործվող ջրհորների և ստորերկրյա աղբյուրների կազմակերպման և պահպանման համար սանիտարական կանոնների պահանջները:

Սննդամթերքի և կենցաղային կարիքների համար տեխնոլոգիական նպատակներով մատակարարվող ջուրը պետք է համապատասխանի ԳՕՍՏ 2874-82 «Խմելու ջուր: Հիգիենիկ պահանջներ և որակի վերահսկողություն» պահանջներին: Ձեռնարկությունը պարտավոր է ջուրը հանձնել քիմիական և բակտերիոլոգիական հետազոտությունների՝ տարածքային սանիտարահիգիենիկ կայանների կողմից սահմանված ժամկետներում, բայց առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ ջրամատակարարման ցանցից ջուր օգտագործելիս և ամսական մեկ անգամ, եթե առկա է տեղական աղբյուր: Բաց ջրամբարներից և ջրհորներից ջուր օգտագործելիս ջրի մանրէաբանական վերլուծությունը պետք է իրականացվի առնվազն 10 օրվա ընթացքում մեկ անգամ:

Կոմպրեսորային կայանքների, տարածքի ոռոգման, մեքենաների արտաքին լվացման համար կարող է օգտագործվել տեխնիկական ջուր: Տեխնիկական և խմելու

ջրի խողովակաշարերը պետք է լինեն առանձին և ներկված տարբեր գույներով, իսկ բաժանման կետերը հատուկ մակագրություններով՝ «խմելու», «տեխնիկական»:

Խմելու և հրդեհաշիջման կարիքների համար ջուր պահելու ջրամբարների քանակը պետք է լինի առնվազն երկու, դրանց շրջանառությունը պետք է ապահովվի ոչ ավելի, քան 48 ժամվա ընթացքում: Առողջապահության նախարարության կողմից հաստատված «Կենցաղային խմելու ջրի ախտահանման և քլորով ջրային կայանքների ախտահանման հրահանգների համաձայն՝ պարտադիր է ջրակուտակիչներում ջուրը քլորացնել՝ քլորի մնացորդային հսկողությամբ»:

Դժբախտ պատահարների դեպքում, վերանորոգման աշխատանքներից հետո, ինչպես նաև սանիտարահամաճարակային կայանի հրամանով, ջրակուտակիչների և ջրամատակարարման ցանցերի ախտահանումը պետք է իրականացվի նշված ցուցումներին համապատասխան՝ որակի հետագա հսկողության հետ:

Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներում հարկի յուրաքանչյուր 150 մ<sup>2</sup> մակերեսի համար պետք է նախատեսված լինի մեկ լվացման ծորակ (բայց ոչ պակաս, քան մեկը յուրաքանչյուր սենյակի համար սենյակ):

#### 14. Ջրահեռացում

Ձեռնարկությունները պետք է ունենան կենցաղային, արդյունաբերական և հեղեղատար կոյուղու ցանցեր, որոնք միանում են բնակավայրի կոյուղու համակարգին, կամ ունեն իրենց մաքրման սեփական համակարգը: Կեղտաջրերի հեռացման պայմանները պետք է համապատասխանեն «Կեղտաջրերի աղտոտվածությունից մակերեսային ջրի պաշտպանության կանոնների» պահանջներին և համաձայնեցվեն տեղական սանիտարահամաճարակային կայանի հետ:

Սարքերից և մեքենաներից կեղտաջրերի խողովակաշարերը միացված են կոյուղու ցանցին՝ սիֆոնների տեղադրմամբ կամ ձագարների միջոցով՝ շիթի ընդմիջումով:

Կարանտինից, մեկուսարանից, սպանդանոցից, մեքենաների համար սանիտարական մաքրման կետից, ինչպես նաև դրանց հարակից տարածքը լվանալու կեղտաջրերը ախտահանվում են նախքան կոյուղատար լցվելը:

Ձեռնարկությունները պետք է ունենան ջրամատակարարման և կոյուղու սխեմաներ և ներկայացնեն դրանք կարգավորող կազմակերպությունների պահանջով:

#### 15. Հակահրդեհային և սանիտարահիգիենիկ սահմանափակումներ

Գլխավոր հատակագծում շենքերի և շինությունների տեղադրելու ժամանակ դրանց միջև հեռավորությունները պետք է սահմանվեն նվազագույն՝ հիմնվելով սանիտարական, անասնաբուժական և հակահրդեհային անվտանգության պահանջների, տեխնոլոգիական նախագծման ստանդարտների վրա:

Բակի լայնությունը պետք է լինի ոչ պակաս բակը ձևավորող ամենաբարձր շենքի քիվի բարձրությունից, բայց 15 մ ոչ պակաս:

Սպանդանոցների տարածքում անհրաժեշտ է ապահովել շենքերի և շինությունների միջև անհրաժեշտ հեռավորությունները (բացակները)՝ հաշվի առնելով քամիների վարդը, շենքերի հրդեհակայունությունը:

Հրդեհաշիջման համար տարածքը պետք է ապահովված լինի դեպի ջրամբարներ առնվազն 6 մ լայնությամբ անարգել մուտքի ճանապարհներով և ավտոմեքենաների շրջադարձի համար հարմարավետ 12x12 մ չափերով հարթակով:

Գյուղատնտեսական արտադրական տարածքի շենքերի միջև նվազագույն հեռավորությունը պետք է լինի.

- 15-20 մ-ից ոչ պակաս,
- շենքերի և շինությունների շուրջ պետք է ապահովվի առնվազն 6 մ լայնությամբ հրշեջ մեքենաների անարգել մուտեցում:

Մյուս ճանապարհների լայնությունը պետք է լինի առնվազն 3.5-6 մ (միակողմանի կամ երկկողմանի երթևեկությամբ):

Շենքերի ու շինությունների միջև հեռավորությունները՝ օբյեկտի վտանգավորության կարգից և հրակայունության աստիճանից կախված ընդունվում են ՀՀ քաղաքաշինության նախարարի 23.05.2003 թ. N 32-Ն որոշմամբ հաստատված ՀՀՇՆ III-9.02-02-03 «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր» շինարարական նորմերի 5.28 կետի աղյուսակ 1-ի տվյալների: Հեռավորությունը պահեստներից մինչև շենքերն ու շինությունները և պահեստների միջև՝ աղյուսակ 2-ի տվյալներին համապատասխան:

Արտադրական տարածքի ավտոմոբիլային մուտքերի դարպասների լայնությունը անհրաժեշտ է ընդունել օգտագործվող ավտոմեքենաների ամենամեծ լայնությանը գումարած 1,5մ, բայց 4,5մ ոչ պակաս:

## 16. Մակերևութային ջրահեռացում

Հարթակի մակերևութի թեքություններն անհրաժեշտ է ընդունել 0,003-ից ոչ պակաս և 0,05-ից ոչ ավելի կավային գրունտների, 0,03 - ավազային գրունտների, 0,01 դյուրաողողվող (յոս, մանրահատիկ ավազներ) գրունտների համար:

Նստվածքային գրունտի պայմաններում հարթակի համահարթվող մակերևութի թեքությունները պետք է ընդունել 0,005:

Սպանդանոցները՝ լեռնալանջի վրա կամ դրա ստորոտում տեղակայելիս, լանջի վերին կողմից տարածքը ողողումից պաշտպանելու նպատակով պետք է իրականացվեն լեռնային առուներ՝ տեղաբաշխելով դրանք տարածքի սահմանից 5մ ոչ մոտ: Առուների լայնական կտրվածքն ու դրանց քանակը պետք է որոշվեն հաշվարկով՝ ըստ ՄՆԻՊ 2.04.02:

Սպանդանոցների հարթակներում պետք է նախատեսել հեղեղատար փակ ցանց:

Սպանդանոցների հարթակներում ջրահեռացման բաց ցանցի անհրաժեշտության դեպքում, ճամփեզրի և սեղանաձև կտրվածքով առուների նվազագույն չափերը պետք է ընդունել 0,3մ հատակի լայնությամբ և 0,4մ խորությամբ:

Շենքերի առաջին հարկերի հատակների մակարդակը պետք է բարձր լինի շենքերին հարակից տարածքների հատակագծային նիշերից ոչ պակաս, քան 15սմ:

### **17. Տարածքի պաշտպանություն քամիներից**

Տարվա երեք ամենացուրտ ամիսներին, 5մ/վրկ և ավելի միջին արագությամբ քամիների ազդեցության շրջաններում տեղաբաշխված շինությունները պետք է քամիների գերակշռող ուղղության կողմից պաշտպանված լինեն ծառատունկի գոտիներով: Գոտիների լայնությունը պետք է լինի 20մ ոչ պակաս:

Գոյություն ունեցող ծառատունկերը պետք է հնարավորինս պահպանել:

Շենքերի երկայնքով մայթերը պետք է տեղադրել.

- շենքերի տանիքներից ջրի կազմակերպված հեռացման դեպքում, կառուցապատման գծին կից, ավելացնելով եզրամայթի լայնությունը 0.5մ,

- տանիքներից ջրի անկազմակերպ հեռացման դեպքում, կառուցապատման գծից 1,5մ ոչ պակաս:

### **18. Բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջների ապահովում**

Հենասայլակներով հաշմանդամների հնարավոր անցման համար մայթերի թեքությունները չպետք է գերազանցեն՝ երկայնականը 5%-ից, լայնականը 1%-ից: Կազմակերպության ավտոճանապարհների երթևեկելի մասի հետ այդպիսի մայթերի հատման տեղերում, կողաքարի բարձրությունը չպետք է գերազանցի 4սմ:

### **19. Կենդանիների նախասպանդային պահման բազային ներկայացվող պահանջներ**

Կենդանիների պահման նախասպանդային բազայի տարածքում, 2մ բարձրությամբ ցանկապատով առանձնացված տեղամասում, տեղակայվում են կարանտինային բաժինը և մեկուսարանը:

Կարանտինային բաժինը նախատեսվում է վարակիչ հիվանդությունների նկատմամբ կասկածվող կենդանիների պահման համար, մեկուսարանը՝ հիվանդ կենդանիների պահման համար:

Ձեռնարկությունը մեկուսարանին կից ունենում է կենդանիների դիակների հերձման առանձնացված սենք և դիակների տեղափոխման համար նախատեսված հատուկ փոխադրամիջոց:

Կենդանիների տեղափոխման փոխադրամիջոցները կենդանիների դատարկումից ու թափոնների մաքրումից հետո լվացվում և ախտահանվում են հատուկ հրապարակներում

Կենդանիների նախասպանդային պահման բազայի մեջ մտնում են նաև ավտոմոբիլային հարթակները՝ կենդանիների ընդունման, անասնաբուժական զննման և ջերմաչափման համար ծածկ ունեցող փարախներով, կենդանիների նախասպանդային պահման մասնաշենքը (ծածկը), սպասասրահի մասնաշենքը՝ հագուստի սանիտարական մշակման համար ախտահանող խցիկով և կենցաղային սենքերով, թափոնների հարթակը, փոխադրամիջոցի և գույքի սանիտարական մշակման կետը:

Կարանտինային բաժնի, մեկուսարանի պատերը, հատակը, սարքավորումները պատրաստվում են հեշտ ախտահանման ենթարկվող նյութերից, որը կատարվում է տարածքը կենդանիներից ազատելուց հետո: Կարանտինային բաժնում և մեկուսարանում չի թույլատրվում օգտագործել փայտից պատրաստված կերաման, ջրաման և այլ գույք: Կարանտինային բաժնի և մեկուսարանի տարածքը ամեն օր մաքրվում է թափոններից և լվացվում: Կարանտինային բաժնի, մեկուսարանի և փոխադրամիջոցի սանիտարական մշակման կետի կեղտաջրերը, մինչև ընդհանուր կոյուղագծին միանալը, անցնում են թափոնաբռնիչ սարքով և վարակազերծվում:

Կախված կլիմայական պայմաններից, կենդանիները պահվում են սենքերում և բացօթյա փարախներում՝ ծածկի տակ: Յուրաքանչյուր փարախում հատակը ունենում է կարծր ծածկ, իսկ ջրամանները ապահովվում են հոսող ջրով: Փարախի մի մասում լինում են կերատաշտեր և կենդանիներին կապելու հարմարանքներ:

Կենդանիների պահման սենքերը և բաց փարախները ամեն օր մաքրվում են թափոններից, որոնք տեղափոխվում են թափոնների պահեստարաններ:

Թափոնների կենսաջերմային վարակազերծումը կատարվում է հատուկ սարքավորված հարթակներում, որի տեղակայումը համաձայնեցվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ու Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ:

Կենդանիների դատարկումից և թափոնների մաքրումից հետո փոխադրամիջոցները պարտադիր մաքրվում և ախտահանվում են հատուկ առանձնացված տարածքում:

**Սպանդանոցների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ տարածք**

NN	Սպանդանոցի տեսակը	Հողամասի չափերը (մ)	Մակերեսը (հա)	Շենքի չափերը (մ)
1	2	3		4
1	Մոդուլային (ստացիոնար) 5-7 գլուխ ԽԵԿ համար	30x44	0.1320	18x8
2	Մոդուլային (ստացիոնար) 10 գլուխ ԽԵԿ համար	80x62	0.4960	24x12
3	Մոդուլային (ստացիոնար) 25 գլուխ ԽԵԿ համար	70x97	0.6790	24x18


## ՍՊԱՆԴԱՆՈՑ 5 ԳԼՈՒԽ ԽԵԱ-Ի ՄՈՐԹԻ ՀԱՄԱՐ

ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ՆԱԽԱԳԾԻ ԾԱԿԱԼԸ ԿԱԶՄՈՒՄ Է 5 ԳԼՈՒԽ ԽԵԱ-Ի ՄՈՐԹԻ ՀԱՄԱՐ ՏԻՊԱՅԻՆ ՄՈՂԵԼ, ՈՐԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՎԱՔՈՎԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ (ՍԵՆԴԿԻՉ ՊԱՆԵԼՆԵՐՈՎ):



ՆԱԽԱԳԻԾՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.



- ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՍՊԱՆԴԱՅԻՆ ՊԱՀՈՒՄ ԵՎ ՋՆՆՈՒՄ
- ԿԵՆԴԱՆՈՒ ԶԳԱՅԱՋՐԿՈՒՄ
- ԱՐՅՈՒՆԱՋՐԿՈՒՄ
- ԿԱՇԵՀԱՆՈՒՄ
- ՄՍԵՂԻՔԻՑ ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ
- ՄՍԵՂԻՔՆԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ
- ՄՍԵՂԻՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԿԻՍԱՄՍԵՂԻՔՆԵՐԻ
- ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒՄ
- ԴՐՈՇՄԱՆՇՈՒՄ, ԿՆՔՈՒՄ ԵՎ ՍԱՌԵՑՈՒՄ:



ՀԱՏԱԿԱԳԾԻ ԳՈՏԵՎՈՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ՝ ՄԱՔՈՒՐ ԳՈՏԻ, ԿԵՂՏՈՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՏԻ ԵՎ ՄԱՔՈՒՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՏԻ: ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԵՆՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՆԱԽԱԳԾՈՒՄ:



ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆ ԳՈՏԻ ԱՂՏՈՏՎԱԾ ՕՂԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ  
 ՇԱՐՔՄԱՆ ՈՒՐՎԱԳԾՈՎ /ԴԵՊԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ԳԵՐԱԿՇԻՈՒ  
 ՔԱՄԻՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ/




-  — ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՂՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ
-  — ԻՆՏԵՆՍԻՎ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ /ԳԱԶԵՐ, ՀՈՏ/

-  — ՊԱՇՏՊԱՆԻՉ ԾԱՌԱՏՆԿՈՒՄՆԵՐԻ ԳՈՏԻ
-  — ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՆՇՈՒՄ. a - հեռավորությունն ըստ 245-71 շինարարական նորմերի:


5 ԳԼՈՒԽ ԽԵԱ-Ի ՀԱՄԱՐ ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԱՌԱՋԱՐԿ



ՆՇՈՒՄ. 5 ԳԼՈՒԽ ԽԵԱ-Ի ՄՈՐԹԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍՈՒ ԿԱԶՄՈՒՄ Է 1200-1500 ՔՄ:




# ԳՈՏԵԿՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:60



- ՍԱՔՈՒՐ ԳՈՏԻ
- ԿԵՂՏՈՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՏԻ
- ՍԱՔՈՒՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՏԻ


# ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:60




## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. Մորթի տեղամաս	35.6 մ <sup>2</sup>	5. Սանհանգույց	3.1 մ <sup>2</sup>
2. Լաբորատորիա	4.1 մ <sup>2</sup>	6. Մուտքային սպասարկման սենյակ	2.6 մ <sup>2</sup>
3. Ենթամթերքի մշակման սենյակ	3.1 մ <sup>2</sup>	7. Սառնարան	10.6 մ <sup>2</sup>
4. Հանդերձարան	6.9 մ <sup>2</sup>	8. Տեսակավորում և մշակում	5.3 մ <sup>2</sup>

ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ԵՌԱԶԱՓ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ




## ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ԵՌԱԶԱՓ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ



Մորթի տեղամաս  
35.6 մ<sup>2</sup>

Մորթի տեղամասում անհրաժեշտ սարքավորումների ցանկ

1. Անասունների զգայազրկման խուց
2. Զգայազրկման հարթակ
3. Արյունի տաշտակ
4. Արյան հավաքման թասակ
5. Տեղաշարժող աշխատանքային սեղան
6. Աշխատանքային հարթակ
7. Գործիքների սանիտարական մաքրման լվացարան
8. Ենթամթերքի մշակման և փաթեթավորման սեղան
9. Ժամանակավոր պահպանման սառնարան
10. Շարժական էլեկտրակարապիկ
11. Մսեղիքը կախովի գծին տեղադրելու հարմարանք
12. Կախովի կշեռք
13. Ապրանքային կշեռք



## ՄՊԱՆԴԱՆՈՑԻ ԵՌԱԶԱՓ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ

Այս տեղամասերում անհրաժեշտ սարքավորումների ցանկ

1. Ենթամթերքի մշակման սեղան
2. Լվացարան
3. Զուգարանակոնք
4. Լոգախցիկ

